# ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպիոյ համար տարեկան 4 ոսկի թղթադրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար արկն. 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն լինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վերադասեալ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սակ յաւելման բաժնեդրնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Թ ՏԱՐԻ ԹԻՒ 53

1887 ՓԵՏՐՎԱՐ 23
(ՓԵՏՐՎԱՐ 11 Հ. Տ.)

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Դշ. և Շրթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Գոնէ տասնեակ մը կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուներով։
Գոնէ տասնեակ 1 միջակ գիրը 1 տողիմ կարժէ. 1 գիտ... 2 տողիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal Ar... via, MARSEILLE (France)

*Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)*


## ՀՈՎԱՆՆԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Ի՛նչպիսի միտքեր ի հարկաւոր.—Նամակ Ռուսիայէն (Տիֆլիս).—Նամակ Եգիպտոսէն (Այէքսանդրիա).—Նոր հրատարակութիւններ. — Հայաստանի Զուտակներէն Միութիւնը.—Տեղական.—Արտասահմանի լուրեր.—Առեւտրական.—Ծանուցգումներ. —Բանասիրական (վանայ ձմեռս):

### Ի՛ՆՉՊԻՍԻ ՄԻՈՒԹԻՒՆ Է ՀԱՐԿԱՒՈՐ

Յեղափոխական գործին համար քանիցս մենք գրած ենք թէ միութիւն է հարկաւոր. թէ ակար այժերը պօտքացուցնելու համար պէտք է միացունել զանոնք։ Միութիւնը զօրութիւն է կը կրկնեն ամենքն ալ և ոչ ոք կուզէ հակառակորդ երևիլ այս ճշմարտութեան։ Բայց թէ ի՛նչ պէտք է հասկնալ «միութիւն» բառով. ահա այդտեղ կարծիքները կսկսին բաժնուիլ և միութիւնը գոյացուելու մէջ երևան կուգայ անմիութիւնը։

Թերևս ուրիշ անգամ մենք առիթ ունենանք այս նկատմամբ ուրիշների յայտնած կարծիքները կամ իրենց ցոյց տուած ընթացքը քննելու. բայց այսօր կը գրենք պատեղ ինչ որ մենք կը հասկնանք միութիւն բառով։

Մի բանալ չը նշանակէր կութօրէն խմբով հեռանիլ ուրէ մի առէն քամահանոյքին, այլ գոնէորան այժեր իրար հետ միացունել գործակցութեամբ աշխատելու համար։ Համարձակ պէտք է խոստովանինք որ հրապարակի վրայ մենք չենք տեսներ դեռ մի այնպիսի անձ կամ միանձնական խումբ որ յեղափոխական գործին համար հարկ եղած այժերի մեկ մեծ մասը իր վրայ ներկայացուցեր։ Եւ երբ մի այդպիսի գործատու անձ կամ մարմին չկայ մէջտեղ գործի գլուխ անցնելու համար, պէտք է որ ցրուած մանրակի այժերն միանան իրար հետ, հաղորդակցութիւն, կապակցութիւն ունենան, կազմեն մի դաշնակցական մարմին և իրար քամահանչելուն իր այժեր բերելով մէջտեղ, իրար հետ խորհրդակցելով և ամեն մեկը իր կրցածը, իրեն ինկած բաժինը կատարելով յառաջանալ գործը։

Յեղափոխական գործը յառաջ տանելու համար պէտք է դիմել զանազան միջոցների որոնք ուղղակի կամ անուղղակի կառավարութեան դէմ ներպատերազմը։ Այդ միջոցներէ մեկը այսինչ անձ կարող է գործադրել իսկ ուրիշ անձ ալ ձեռնհաս է այնինչ միջոցը գլուխ հանել և այդ կերպով դիւրութիւն տալ գործիչ։ Մէկը կարող է խնդրագիրներ տալ Անգլիական կառավարութեան և հանրային կարծիքը յուզել Անգլիոյ մէջ ի նպաստ հայկական դատին։ Մի ուրիշը գուցէ այժ է այդ որ պէտք չէ անտես առնել թէև ինքն ըստ ինքեան անբաւական և անպօտ է մեր գոյատևելու։ Մի ուրիշը փարիզի լրագիրներին մէջ յօդուածներ կուտայ հայերին նկատմամբ և հան կը ջանայ ուշադրութիւն գարձնել հայերին վրայ։ Բայց այդ ամենը ջանքեր ինչ օգուտ կրնան ունենալ երբ կառավարութիւն չունենան Հայաստանի մէջ գործակիցներին հետ, Հայաստանի մը մեր գործի գլխատար ատպարէզն է և ամենայդ գործակիցների վրայ է որ պիտի կեդրոնանայ մեր յոյս։ Ինչ աչքով և վստահութեամբ կրնան նայիլ մեր վրայ Հայաստանցիները որոնք գործի պժատարութեան մեծ մասը կը կրեն իրենք, որոնք ամենէն տեսիլ զոհողութիւններէն ենթարկուած են գործին պատճառաւ, երբ մենք երևնենք ըսենք իրենց թէ մենք ձեր կառավարիչներ ենք, հետևապէս դուք ձայն չունիք բնաւ և ինչ որ մենք ձեզ հրամայենք, պէտք է ամենայն խանարհութեամբ հետևիք միայն մեր հրամաններին։ Ի՛նչ կրնայ մինչև մի ատաճան պիտի ծիծաղին մեր վրայ և բանն թէ ատենք մեր յաւչեն գիտեր և կուզեն դեղ տալ մեզ Հայաստան դեռ իշխանութիւն չունեցած, իշխաններ լինել կը պատրաստուին։ Յեղափոխական գործին համար մեկը իր գրամ կը բերէ մէջտեղ, միւսը իր գլխ կրնայ նուիրել այսինչը իր գործին համար կրնայ օգտակար լինել, այսինչը գործին կը նուիրէ իր կեանք թաղելով իր արիւն, մեկ ուրիշը առաքեալի պես գիւղ գիւղ և քաղաք քաղաք պտտելով գաղափարներ կը տարածէ իրեն համակիլ կրցած գաստակարդներին մէջ կամ հրահանգներ կը տանի այս կամ այնտեղ։ Այսպէս հազար և մի միջոցներ կան որոնք պէտք է գործադրել և այդ ամենին ալ քնդունակութիւն, յարմարութիւն չկրնար ուներնալ մեկ անձ. առանց ամենին վրայ միանգամայն հսկայութիւն ան-

---

ուրիկ և աքսորել տալով վարձատրեցին։ Ալիսկօրեայ վարժարանի ուսանողներն այսուհետև կամ պիտի դիմեն բազքականաց դիրքը ուսանիլ չարուհակելու համար, կամ պիտի վերսկսին իրենց թողուցած փողոցային կեանքը, որ դառնալով սարկաւիտ մարդերու ցածութեան։

Գիւղերու մէջ ազգայարդեր, գիւղերներէ զատ, ցերեկներն ալ դրեթէ քունով և չաղփատութիւնով կանցունեն։ Անշան թէև նոցա աշխատութիւն տաժանելի է, ձմրան ալ ընդհակառակն բոլորովին անգործ և պարապ կը մնան։ Այս եղանակի մէջ աշխատութեան բաժանումն երկան և կնոջ միջեւ անհաւասար հմման վրայ է եղած։ Կին կը չարուհակէ միշտ կատարել իր սովորական աշխատութիւնները, այսինքն կերակուր և հագ եփել, տուն մաքրել, կաթ կթել, մէրել և զարնել, իսկ տնեցիներու հագուստները լուալ, կարել և կարկտնել։ Այս ամենէ վերջ եթէ ժամանակ գտնէ, թել կը մանէ կամ ջուլ կը գործէ։ Սակայն այրը, եթէ արդէն մշակ չունի, փագեախի կենդանիներուն կեր տալու կամ անոնց տակ մաքրելու թեթեւ գործը պիտի ուսանի, գործ մը՝ զոր չատ անգամ կնոջ վրայ թողուլ կերթայ պատօճներ կամ թաւմաններ չազակրատելու։

Յատկի է որ մեր ազգային իշխանութիւնները չատ անձուկ հորիզոնով կը դիտեն իրենց պաշտօնի տահմանները։ Օրինակի համար վանայ առաջնորդը կարծես թէ լոկ քաղաքի և Այգեստանի համար պաշտօնեայ է. իր ուշադրութիւն գիւղացոց այն տաեն կը դառնայ երբ նշան օրհնել պէտք է կամ, չատ չատ, երբ այսինչ կամ այնինչ գիւղ թաղնած են։ Նարեխիղճ և գործունեայ մի առաջնորդ եթէ երբեմն երբեմն քաւորութեան երթայ կամ քարոզիչներ խրկէ գիւղերու մէջ համոզելու և յորդորելու որ գիւղացիներ թողուն իրենց չինական գաղափարները, արհեստներ ուսանին և ձմեռն ալ աշխատութիւնով անցունեն, ամեն կերպով օգտակար պիտի լինի անոնց։ Մի դժար գործ չէ այս։ Մի քանի օրինակներ կըրնան տեսիլ համոզիչ լինել։ Մեր գեղջուհիներ ջալ կը գործեն այնքան նահապետական գործիներով որ հազիւ հրնան օրական մի կանդուն բան պատրաստել։ —Նոքա, իրենց սովորական գործեր կարդադրելէ յետոյ բամակ ալ կը մանեն, բայց իրենք կտաւ չեն հիւսեր, մանածնին քաղաք բերելով փոխարարներու մօտ փոքրիկ չահով մը կը փոխեն բամակի հետ և ապա իրենց պէտք եղած կտաւը խանութպանէն կը գնեն խիստ թանկ գնով, որովհետև այն թելը զոր իրենք կը մանեն, իրենց կը վերադառնայ երեք միջնորդներու ձեռքէ անցնելէ յետոյ։—Գիւղերու մէջ ոչ մի բանջարեղէն և նոյն իսկ գետնախնձոր չեն ցաներ. անոնց ուտելիքը հացի հետ, սահք օրերու մէջ, եթէ գտնեն, քանի մ'ապուխտներ են, իսկ ուտիք օրերն ալիւղհատած թան կամ առ առաւելն ճաչ (խաչած արմտիք մը որի վրայ հալած կարագ կը լեցնեն)։—Վանայ հովտի հարաւակողմի քարահանքերու մէջ աշխատող գիւղացիներէն ոչ մի մարդ կայ որ գարնութենէ հասկնայ. ամեն առաւօտ պէտք է նոքա իրենց գլուխները քարէն որել տալու համար։—Չապա որ աւելի զարմանալին է, կան գիւղեր որ իրենց պէտք եղած փայտը քաղաքէն կը գնեն։ Այս վիճակի մէջ մեր գործիչներու անելիքը եւրոպական արհեստներ տարածել չէ, այլ ուսուցանել անոնց այնքան, որքան գիւղերնին քաղաքի մէջ։ Եթէ այսչափը կատարուի, այն ալ մեծ բան է։

Որովհետև վանայ ձմեռը երկար է, 4—5 ամիս կը տեւէ, անոր համար ես ալ համարձակեցայ քիչ մ'աւելի երկար գրել և ներողութիւն խնդրել ընթերցողէս եթէ ձանձրացուցի։

6/18 Յունվար 1887 ԿՈՐԻՒՆ
ՎԱՆ

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԱՆՑ ՁՄԵՌԸ

(Շարունակութիւն 52րդ. թիւեն եւ վերջ)

Մեր գիւղացիները բարի սովորութիւն մ'ունին որ երեկոյներ կը հաւաքուին այսինչի կամ այնինչի փաղեախը եւ կը խօսակցին իրենց հետաքրքրաշարժ պատմական խնդիրներու վրայ։ Փաղաքի մէջ թիւրքերն ալ այս սովորութիւն ունին, թէև արդիւնած է ժամ 2էն յետոյ (ըստ Թրքաց) տունէ դուրս ելնել և պտտիլ կամ գումարուիլ տատ անդ։ Արգելք միայն հայերու համար է։ Իսկապէս մենք օգտակար կերպով չենք անցուներ ձմեռ, ինչպէս ուրիշ տեղեր կանցունեն։ Ընտանեկան երեկոյթ, նուագ ահանդէս, թատրոն նոյնքան անծանօթ են որքան հասարակային դատախօսութիւններ, ընթերցարաններ են։ Ձմեռուան երկայն գիշերները քնանալով միայն կը լսացնենք։ Չեմ կարող՝ առանց խորին ցաւակցութեան՝ չյիշել իմ հայրենակից եռանդուն պատանիները որ մի քանի թաղերու մէջ բացած կիրակօրեայ վարժարաններով կ'աշխատէին օգնել կարգ մը երիտասարդներու կրթութեան և դաստիարակման։ Մեր պաշտօնական մարմիններ զանոնք բանտարկել տալով ամենայն խստութեամբ կը հալածէին։ Ասոնց ամենքն ալ ուսումնասէր երիտասարդներ էին, հետևապէս դուք ձայն չունիք բնաւ և ինչ որ մենք ձեզ հրամայենք, պէտք է առանց խանարհութեամբ հետևիք միայն մեր հրամաններին։ Ի՛նչ կրնայ մինչև մի ատաճան պիտի ծիծաղին մեր վրայ և բանն թէ ատենք մեր յաւչեն գիտեր և կուզեն դեղ տալ մեզ Հայաստան դեռ իշխանութիւն չունեցած, իշխաններ լինել կը պատրաստուին։ Ցեղափոխական գործին համար մեկը իր գրամ կը բերէ մէջտեղ, միւսը իր գլխ կրնայ նուիրել այսինչը իր գործին համար կրնայ օգտակար լինել, այսինչը գործին կը նուիրէ իր կեանք թաղելով իր արիւն, մեկ ուրիշը առաքեալի պես գիւղ գիւղ և քաղաք քաղաք պտտելով գաղափարներ կը տարածէ իրեն համակիլ կրցած գաստակարդներին մէջ կամ հրահանգներ կը տանի այս կամ այնտեղ։ Այսպէս հազար և մի միջոցներ կան որոնք պէտք է գործադրել և այդ ամենին ալ քնդունակութիւն, յարմարութիւն չկրնար ուներնալ մեկ անձ. առանց ամենին վրայ միանգամայն հսկայութիւն ան-

Տիխրս, 28/9 փետրվար 1887

ՆԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. Փ.

Նախ քան հայկական հարցերի մասին խոսելը՝ պետք չէ մոռանալ, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը Թուրքիայի հայ հպատակներին ոչ մի իրավունք չի տալիս ներքին գործերի մեջ միջամտելու։ Այդ հոդվածը միայն Բարձր Դռանը պարտավորեցնում է ինքն իրեն ստանձնել բարենորոգումներ անելու հոգսը։ Ուրեմն, եթե Թուրքիան չի կատարում իր ստանձնած պարտականությունները, ապա դրանով նա խախտում է միայն Եվրոպայի հանդեպ ունեցած իր պարտավորությունները, բայց ոչ թե հայերի հանդեպ։ Հայերը ոչ մի իրավունք չունեն պահանջելու, որ Թուրքիան կատարի իր ստանձնած պարտականությունները։ Հայերը կարող են միայն խնդրել, որ Եվրոպան ստիպի Թուրքիային կատարել իր պարտականությունները։ Ուրեմն, հայերի խնդրանքը ոչ թե իրավունքի, այլ միայն շնորհի հարց է։

Ինչպես ծանուցվել է, 7 ցուցիչ հոդվածներ ունեցող 16/28 փետրվարի բարենորոգումների ծրագրի վերաբերությամբ Բարձր Դռան ներկայացրած առարկությունները (որ մեզ հայտնի չեն) քննելու համար Կ. Պոլսում հավաքվել են դեսպանների ներկայացուցիչները։ Ինչպես հայտնի է, այդ ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ հավաքվում են Կ. Պոլսում՝ Բարձր Դռան հետ բանակցելու համար

ութեան աղնիւ երիտասարդը, պարկեշտասիրտ ու հայկական Աբշուհունեաց ժամանակի դրօշակ պարզած էր յոյժ փառաւոր և խօսեցանք իրենց ամենայանկալի նիւթին վրայ... ոտքի ելաւ եռանդուռ ուսեալ պատանի մը որ առ մեզ ուզեվել իւր խօսքերը՝ տառապելոյս իւր շնորհակալութիւն յայտնեց, և առաջարկեց ընկերութիւն կազմել որ նոյն վայրկեանին հանդիսականներէն ընդունելեցաւ։ Ցետոյ ոտքի ելաւ վերջիւիչալ ատիկինը և լալով խօսելով տառապեալ հայրենեաց վրայ՝ նա ևս առաջարկեց պարկեշտասիրտ տիկնանց որ ընկերութիւն կազմեն. այս առաջարկ ևս ընդունելեցաւ անմիջապէս։ Ցետոյ ոտքի ելաւ ազնիւ տանուտէրը և խօսեցաւ սիրոյ և հայ լեզուին յառաջ տանելուն վրայ և Հայը հային հետ առևտուր ընելու վրայ։ Ի վերջոյ ոտքի ելաւ ազնիւ եռանդուռ երիտասարդ մը որ խօսեցաւ անդրծ և տառապեալ անձանց օգնելու վրայ։ այս առաջարկին վրայ հանդանակութիւն մը եղաւ տառապեալ մի ընտանիքի օգնելու որ ամսուն 2 օր առաջ մեռած էր, թողնելով հինգ կին մը հանդերձ մի քանի զաւակօք։ Անյուսիւս ազգային երգեր երգուեցան։ Ասոր վրայ նուագուսատիկ զգածուած, պարտաւորած եմ մի քանի օր սպասելու որպէս զի ընկերութեանց ծրագիրները տեսնելով իրենց քայլերը մի և խօսիմ ի պատիւ իմ բիւր տառապանաց արգէն մի քիչ ալ խոնջած եմ, բայց փառք Աստուծոյ հիւանդութիւն մը չունիմ (1)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԱՋՃԵԱՆ

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք Վենետիկի «ԲԱԶՄԱՎԷՊ» հանդէսի նախորդ տարւ վերջին և ռամկայ պրակը։ Բովանդակութիւնն է հետևեալը։ ՀԱՆՐԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ. Հին Սրձանագրութիւն մի.—Սրուեսա գունագոյն և ոսկեխառն թանաքի վան խորանայ Աւետարանի (Պատառիկ ի հին ձեռագրայ նախնեայ),—ձանապարհորդութիւն ի Թէոդոսիոյ դէպ ի Նոր-Նախիջևան.—Բան յաղագս և յաղինս, ասացեալ ի Բամբարակէ.—Պետրոս Ագամեան, Հայ հռչակաւոր գերասան.—Պատմութիւն արևւելեան վաճառականութեան և միջնեան դարս. Գործ Գաւիլեմ Հայտի, Բ.

(1) Թէև 2 չաբաթի չափ կը լինի որ Գահիրէի մեր թղթակիցներէ լուր առած ենք թէ Պրն. Ե. Եաղճեան հոն հասած է և իւր խսկ Ալեքսանդրիայէն մեզ գրած երկրորդ նամակն հրատարակած ենք արդէն «Արմէնիա»ի 48 թուին մէջ, բայց գիտնալով որ հետաքրքրուողներ կան նոքա ճանապարհորդական նամակները կարդալու, աւելորդ չհամարեցինք հրատարակել այսօր Ալեքսանդրիայէն իւր գրած այս առաջին նամակ ևս, չնայելով մի քիչ երկարութեանն։

ԽՄԲ.

տպագրի գաղղիերէն.—«Հանդէս ամսօրեայ». նոր հրատարակութիւն Մրխիթարեան Հօրց Վիէննայի ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ուղևորութիւն ի Պամպէյ Հնդկաց.—Թագաւոր լերանց. վիպասանութիւն եղմնդ Ամսի.—Մանրավէպ (Միօրեայ Թագաւոր, Կոլէնտը Պլանեայ)։ ՀԱՆԴԷՍ ՊԱՏՄԱԿԱՆ. Պատմութիւն ժամանակակից (Ցնցմունք Բարիզու).—Կենսագրութիւն (Յովհ. Ա. Մէօհլէր)։ ՀԱՆԴԷՍ ՈՒՈՒՄՆԱԿԱՆ. Ցարակցութիւն տարրաբանութեան ընդ բնաբանութեան։

—Ստացանք Տփղխի ԱՂԲԻՒՐԻ յանուարի ամսաթերթը, «Սևանայ Լիճը» նկարի հետ միասին որ նկարած է Գ. Բաշինջաղեան իր Հիմանկար օրինակէ։

## ՀԱՑԱՍՏԱՆԻ ՋԱՒԱԿՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

ԹՈՒԼՋԱՅԷՆ Աթժ. Արիստակէս վարդապետ Աճէմեան ղրկած է խմբագրութեանս միջոցով 10 ֆրանգ նուէր «Հայաստանի Ջաւակներու Միութեան»։

—Կը յիշեցուցանենք Միութեան Հիմնադիր անդամներուն որ Տեսչի ընտրութեան քուէարկութիւնը պիտի լինի փետրվար 22/6 մարտի կիրակի օր։ Հետևապէս անոնք որ դեռ չեն ղրկած իրենց քուէ, կը խնդրուի որ փութան հասցունել մեզ ժամանակին։

## ՏԵՂԱԿԱՆ

Վաղը, հինգշաբթի երեկոյ, Ս. Վարդանանց 1036 քսջ նահատակաց տաբերգարձի հանդէսը պիտի կատարուի Հայ մատուռին մէջ (Rue de l'Ormeau, 13)։ Հանդէսը պիտի սկսի ճիշդ ժամ 9ին առանց յապաղման, Աբժ. Տ. Սահակ քահանայի նախագահութեամբ։ Հանդէսին կարգաւորութեան համար յատկապէս պատրաստուած տեսնուած են մի Մանուժոզովի միջոցով Աւետրդ է յայտնել թէ այդ հանդէսի մէջ պիտի երգուին ազգային երգեր, պիտի կարդացուին հայրենասիրական ատենաբանութիւններ պիտի լինին։

Մարսէյլի հայ գաղթականութեան մէջ առաջին անգամն է որ Վարդանանց հանդէսը պիտի կատարուի այս տարի և յոյս ունինք թէ ամեն հայ որ կը պատուէ իւր ազգի և կրօնի համար նահատակուող Վարդանանց յիշատակը, պիտի փութայ ներկայ գըտնուիլ։

Այցելու տարի Վարդանանց հանդէսը ճաշկերոյթով պիտի տեղուէր Hôtel de Luxembourgի մէջ որի համար կարգադրութիւններ եղած էին երբ յանկարծ Մեծ. Սերովբէ Եփէնտի Կիւլպէնկեանի մահուան տխրահիմդոյժը եկաւ Կ. Պոլսէն և կարգադիր Մանուժոզովը պատշաճ համարեց թողուլ այդ հանդէս, ի նշան սգոյ որ ունեցաւ հայ ժողովուրդը իւր ամենէն ընտիր և օգտակար անդամներէ մէկէն զրկուելով։ Իսկ այս տարի ալ Մանուժոզովը, ինչ ինչ նկատումներով, աւելի պատշաճ սեպած է առանց ճաշկերոյթի կատարել հանդէսը և հաւաքուիլ մատուռին մէջ։

—Անցած կիրակի օր հոգեհանգըստի պաշտօն կատարուեցաւ հայ մատուռին մէջ հանգուցեալ Սերովբէ Եփ. Կիւլպէնկեանի համար։ Հանգուցեալի դուստր Աշնուատիայի Տիկին Թիւրապեան այս առիթով նուիրած է մատուռին, բացի ուրիշ ծախքերէ, և մէկ ղայդ արծաթ քչոց, 350 ֆրանգի չափ արժէքով, զոր յատկապէս բերել տուած էր Կ. Պոլսէն։

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Թէև Զարին չըջապատող անձերն ամեն տեսակ ղռուշութիւններ ըրած են որ չհրատարակուի այս լուրը, բայց իմացուած է այժմ թէ Զարին դէմ մի ընդարձակ դաւադրութիւն երեւան եկած է։ Պարագլուխներն եղած են ամենաբարձր դասակարգի մարդիկ որոնք Պետական պաշտօնի մէջ կը գտնուին։ Ըսուի թէ Զարին պահապան սպայներէ քանիներ ձերբակալուած են. ինչպէս նաև կառավարութեան դլխաւոր դպրոցներէ ընտիր աշակերտներ։

—Պէլկրատէն կիմացուինն որ Սերպիոյ նախարարական տադնապը վերջացած է։ Հանրային շինութիւններու նախարար գնդապետ Թոփալովիչ պատերազմական նախարար անուանուած է և իւր նախկին պաշտօն տրուած է Թագաւորի եղբօրորդին Պ. Ռօգիչեվիչին։

—Դամթաւօէն կ'իմացնեն որ Գերմանիոյ մէջ զինուորական պատրաստութիւնները կը չարունակուին։ Վերջին թիւրքօ-գարատագեան պատերազմին մասնակցող 28,000 հոգի քիչ առաջ նոր հրացան պիտի առնուին։ Ցետոյ միւս գունդեր պիտի զինուին որոյ բոլորի գումար կը հասնի 40,000 հոգու։ Միւս կողմէ կը ծանուցուի թէ Թիւրքիա մեծամեծ պատիր կը գործարէ առուրին Ալպանիոյ մէջ։

—Հունգարական խորհրդարանը միաձայնութեամբ քուէարկած է պատերազմական նախարարի խնդրած 50 միլիոն ֆլորինի չափ վարկը։ Նախագահ Պ. Թիցա յայտարարած է թէ այն միաձայն քուէն կը նկատէ հայրենասիրութեան մի ապացոյց, ազգի մը մի ազգ չկրնար աղատ լինել «կառավարութեան ճիգերի նպատակը, ասելցուցեր է Պ. Թիցա, խաղաղութիւնը պահպանելն է։ Մենք չենք ուզեր ո՛չ բանակը չարժուն վիճակի մէջ դնել և ո՛չ պատերազմական պատրաստութիւններ տեսնել. բայց միայն պէտք կը տեսնանք զգուշութիւններ ձեռք առնել պատերազմի պատահականութեան դէմ»

—Լոնտոնէն եկած մի հեռագրի նայելով Ալմանիա մեծ գործունէութիւն ցոյց կուտայ պետութիւնների, մանաւորապէս Անգլիոյ և Իտալիոյ հաւանութիւնը ձեռք բերելու համար, որպէսզի Ռուսիա առժամանակ կեայ կերպով գրաւէ Պուլկարիան այն պարագայի մէջ՝ երբ Կ. Պոլսի բանակցութիւններն յաջող ելք չունենան։ Ալմանիոյ այսպէս վարուելու նպատակն է Ռուսիոյ չեզոքութիւնն ապահովել երբ Ֆրանսայի հետ մի խառնակութիւն պատահի։ Սակայն անգլիական պրէսը բիտող լուրերն, մանաւանդ ժամանակէ մ' ի վեր, չատ վստահելի չեն ճանչցուած Ֆրանսայան լրագիրներէն։

—Նաթօլիէն կը հեռագրեն թէ կարելի է որ Թագաւորը այնտեղ երթայ, երբ Ապրիլկէն վիրաւոր զօրքերն հոն կը հանին։

—Ըստ վերջին լուրերի, Մասովայի մէջ զօրաւոր ժէն ղէնք և ռազմամթերք տուած է եւրոպացի բնակիչներին և տեղայիներէն վստահելիներուն որ կարենան, հարկ եղած տանեն, մասնակցիլ քաղաքի պաշտպանութեանը, թշնամու յարձակման դէմ, մինչեւ որ բաւականին իտալական զօրքեր հասնին։

—Կ. Պոլսէն կը հեռագրեն. եգիպտական խնդրի համար սկսուած բանակցութիւնները առկախ կը մնան։ Պալատը աղդուապէս գիմադրած է սրը Ուօլֆի ծրագրին, և նոյն իսկ լուր կայ թէ բանակցութիւնները չըպիտի շարունակուին։

—Պուլկարական խնդրին բանակցութիւնները դադրած վիճակի մէջ են. Պ. Նելիւոֆ մերժած լինելով Թրքական վերջին ծրագիրը իբրեւ խիստ նպաստաւոր Պուլկարիոյ, Բ. Դուռը կաշխատի այժմ նոր համաձայնութիւն դոյացնել, մերձենալով աւելի ռուսական տեսութիւններուն։ Դիւանագիտական ակումբներուն մէջ կը կարծեն որ մօտալուտ է Պուլկարիոյ դրաւումը Ռուսիոյ կողմէն։

—«Անկախ Պուլկարիա» լրագիրը կըսէ թէ՝ համաձայնիլ Բեռլինի պահանջումներուն մի ռուս պատերազմական նախարար ընդունելով և բանակը վստահելով ռուս սպայներէ, կը նշանակէ երկրի անկախութիւնը և ազատութիւնը մատնել։ Պուլկար կառավարութիւնը պարտի գիտնալ որ այս կարգի սեպ զինքզինք պիտի են. Թարկէ երկիրը զինուորական դիկտատորութեան և անիշխանութեան։

—Ռուսական կառավարութիւնը արգիլած է ռուս սպայներուն և զինուորներուն պուլկարական պատուանշաններ կրել։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՓԵՏՐՎԱՐ 15ԷՆ 22
### ԵՐԳԱՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ. Հրապարակը աւելի կենդանութիւն ցոյց կուտայ, չաբթուս վաճառումները 1700 հակի չափ ըլլալով առանցմէ կը նշանակեմք՝ 300 հակ Խորասան ապիտակները 147½–150 գունաւորները 110–120 ֆր. 300 հակ երկրորդ կարուած կիւրճիւ գառան տեսակ 142½ ֆր. և գունաւորները 95 ֆր. 75 ս. երկրորդ կարուած նուխի 115 ֆր. 160 հակ երկրորդ տեսած Անդրիանապօլիս 132½ ֆր. 160 հակ Պաղատաի սեւերը 170 ֆր. 400 հակ Մուսուլ ծածուկ գներով

ԲԱՄՊԱԿ. Հրապարակը անչարժ ըլ-

լայով պատահական գործեր միայն կըլլան։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Գործերը անպակաս են. վաճառուեցաւ 27 հակ զանազան մետաքսներ. 20,000 քիլօ Պարսկաստանի ֆրիզըն 7, 50 ֆր.էն 5000 քիլօ Նախիի Թոնքալ 4, 50 ֆր. և 2300 քիլօ չխար 3, 75 ֆր. քիլօն։

ԿԱՆԵՓ. Ըստ տեսակին 56էն 64 ֆր. 100 քիլօն։

ՑՈՐԵՆ. Հաստատ է, տօրինները 14–15 ֆր. միջին և ընտիր տեսակները 17½էն 21 ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). Ապրանքի չը գոյութենէն կը վնասուի, 12¾–13 ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Լքեալ դրութեան մէջ է, Ռումանիոյ ապրանքները 13½–15 ֆր. և Օրտու և Տրապիզոնի մաքրուած տեսակները 20–21 ֆր. 100 քիլօն։

ԹՈՒՉԱԿԵՐ (alpiste). Գինները կը բռնուին, բայց քիչ կը վաճառուի, 27½–28 ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱ (sésames). Մերիոյ ապրանքները 41½ ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ (pavots). 26–26½ ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՑ. 24½–25 ֆր. 100 ք.։

ԿԱՂԻՆ. Ձը կոտրածը 39–40 և կոտրածը 92 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՑ. 115–145 ֆր. 100 ք.։

ԱՑԹԻ ՄՈՐԹ. Գինները կոտրկան, ըստ տեսակին 20էն 30 ֆր. տուզնան։

### ԱՐՏԱՍՊՈՒԹԻՒՆ

ՇԱՓԱՐ. Թոյլ է, 42–42½ ֆր. 100 ք.։

ՍՈՒՐՃ. Հաստատ կը չարունակէ, 78–87 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. Ձերմակները 3, 15–3, 35 ֆր. և սեւերը 3, 20–3, 70 ֆր. քիլօն։

ՊՂՊՂ. 86էն 97 ֆր. 50 քիլօն։ Գ.

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ ԱԶԳԻ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳԱՑ ԱՒԳԱՓԵԱՆՑ

Երրորդ տպագրութիւն

Ամէն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, դիտնալ թէ ի՛նչպէս սկսաւ է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրեր, ո՛րանք են եղած իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները և այլն։

Գէորգ Աւգիեանց որ Ծիրնկի Ներսիսեան Վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ եր և որ յանկարծ մի օր երբ աշակերտներ իրեն կը սպասէին Վարժարանին մէջ իւր ոգևորիչ դասեր լսել, իմացաւ, թէ անյայտացեր է, իւր ուսանած դասերի համառօտութիւնը գրած վրայ ամփոփած և թողած էր։ Ա՛յս ախտը դէպք պատահած է 20 տարու չափ առաջ։ Իւր եղբայր ի դուր ընդհարկար նորա հետք գտնազան քաղաքների մէջ փնտուելէ յետոյ, թէ՛ իւր անյայտացեալ եղբօր յիշատակը յաւերժացնելու և թէ՛ Հայոց պատմութիւնը ուսանիլ փափաքողներին մի դիւրութիւն ընծայած լինելու համար հրատարակած է նորա գրած սոյն «Համառօտութիւն Հայոց Ազգի պատմութեան»ը, որ մինչև այժմ երրորդ տպագրութեան արժանացած է։ Սկիզբը գրուած են Հայաստանի հին աշխարհագրութեան վերաբերեալ տեղեկութիւններ և պատմութիւնն ալ այնպիսի ոճով գրուած է որ թագաւորների կռիւները միայն չներկայացուներ, այլև կը պատկերացնէ ժողովրդի վիճակը։ Մանաւորապէս կռիւներէ մէջ մեր թագաւորութիւն ունեցած ժամանակ Լատիններուն դաշնակցութեան վրայ յոյս դնելով մեր կրած աղէտները և յաւատախաբութեան տրդիւնքը ուշագրութեան արժանի ոճով ցոյց տրուած են։

Փափաքելի է որ ամէն Հայ իր տան մէջ ունենար գէթ մէկ օրինակ իւր ազգային պատմութեան դիւրքէն. կարդար և կարդացուներ իւր տան մէջ դտնուողներին։

Գ. Աբովեանցի «Հայոց պատմութեան» սոյն դասագիրքը կարելի է տանալ «Արմէնիա»ի խմբագրատունէն, ղրկելով միայն 2 ֆրանգ մէկ օրինակի համար։ Խմբագրատունը ինք կը վճարէ փոստի ծախքը։ Մէկ անգամէն 10էն աւելի օրինակ գնողին ղեղչ կը լինի։ Վճարքը չղրկուած գիրք չղրկուիր։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Փ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

(Արամեան)

1887 տարւոյն Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէ չատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական կարեւոր դիտելիքները. Օսմանեան կայսրութիւն, — Աւստրիոյ կայսերական պալատան, —Նախարարք Բ. Դրան, —Մեծ պաշտօնատարք Մայրաքաղաքիս, —Հրամանատարք բանակաց, —Կուսակալք նահանգաց, — Գատիպետք և ազգապետք, —Օսմանեան գեսպանք, —Դեսպանք օտար տէրութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայոց պատրիարքական և պաշտօնեայք Օսմ. տէրութեան, — «Հայրապետութիւն Հայոց», —Եպիսկոպոսունք, — Ազգ. հիւպատական վարչութիւն, — Ճանճնաժողովք, —Պաշտօնեայք Պատրիարքարանի,–Աւստրիոյդուպրութիւնք Թուրքիոյ, Թեմք նոցա և տունք, —Հովուութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, —Թաղօրայք Կ. Պոլսոյ, —Համագումար Թաղօրեից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, —Աւստրիոյդուպրութիւնք ի Ռուսաստան և այլն,–Մայրավանք ի Ռուսաստան և այլն, – Կայսերական գերդաստան Ռուսիոյ, —Հայազգի ատենեանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլևայլ տէրութեանց,–Հռովմէական Հայ հաստատութիւն,–Բողքական Հայ հաստատութիւն, — Դատաստանք պետական ուսումնարանի, —Բժիշկք քաղաքական և պինուտական, – Փաստաբանք , – Արուեստագէտք, – Լրագիրք,–Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային,–Եւրոպական միջազգային թղթատարութիւնք,–Եւրոպական նամակատունք,–Ծանրագային Թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ,–Ժամացոյց սուլթանական Օսմ. միջազգային թղթատարութեան,–Ցուցակք երթեւեկութեանց չոգենաւուց այլևայլ ընկերութեանց,–Գատկեր 1887 թուին , – Վիճակագրութիւնք օտար տէրութեանց, – Ազգ.,–Մանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմէնիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ։ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Գարդ ՕՐԱՑՈՑՑԸ ոլի մէջ կայ Վ.Հ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը ղրկուի փոստով 30 սանթիմի փոխարէն։

ՐԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

## ԿԱՑԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՑԾԵՐը։ Ա՛յս գիրք կը ծանօթացնէ ընթերցողը ազգական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի զանազան ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ իւր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իւր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամէն հայրենասէր Հայի տունն։

***

## ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Շէյխ Ջալալէդդինի ապշեցուցիչ պատճառով Տաճկաստանի Հայերի կրած ապէտներն մէկ աղէկապէս նկարագրուած է։ Գիրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Րաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքեր կը ծախուին «Արմէնիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՑԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ։ Մտրսէյլէ դուրս ամէն տեղ համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՑԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ։ «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

Ա. Հ. ԿՐԻԴ ԵՒ ԸՆԿ.

Գաւուքօր Ն. Ու. Բ. Աճգլ. Հիւպատաս

—

Ներածոյ և արտածոյ վաճառականն, յանձնակատար, աճրդավաճառութեան յանձնակատար, մեծ քանակութեամբ ապրանքներու պայմանագիր (քոնթրաթճի) և ամէն տեսակ կալւի գործակատարութեան։

Վերոյիշեալ գանազան ճիւղերին մէջ երկար ժամանակեայ փորձառութիւն ունենալով, պատրաստ ենք յանձնարարութեամբ ընդունել վաճառքներ, պայմանաւոր վաճառման կամ հրապարակային աճուրդի համար, այնպիսի պայմաններով որ փոխադարձաբար չհաշուին և գոհացուցիչ լինին։

Եւրոպական վաճառքներու վրայ նախապատրաստութեամբ մենք կրնանք պրկել ինչ քանակութեամբ ալ որ ուզուին, Հնդկաստանի մէջ գործածուած ապրանքներ, առաջին կարգի ընտիր տեսակներէ, ինչպէս

Լիւքնօսի մանկական խաղալիկներ, Պէնարէսի սրոյր և ոսկեճամուկ չուխա, Մօրատաղատի սրոյրեայ անօթներ, Տէլհիի ոսկեայ և արծաթեայ գոհարեղէններ, Թաշմիրի շալեր, կերպասներ, եւն։

Ընդարձակ տեղեր ունենալով յանձնարարուած ապրանքներ ցոյցի դնելու և ծախելու համար, մենք կարող ենք ամենայն վստահութեամբ յանձնարարել մեր տունը ամէն անոնց որ կուզեն գործով յարաբերութեան մտնել մեզ հետ և մենք չատ ուրախ պիտի լինինք եթէ տեղեկութիւններ և օրինակցուներ ընդունինք այս նպատակով։

Մեր տան մասին տեղեկութիւն ստանալ ուզողներն կարող են դիմել հետեւեալ դրամատուներուն.

BANK OF BENGAL
ROHILCUND ET KUMAON BANK
AGRA BANK LIMITED

Եթէ պէտք լինի, պատրաստ ենք ուրիշ տեղեր ալ ցոյց տալ տեղեկութիւնների (références) համար։

Ասկէ բան մեզ հաղորդելու համար պէտք է ուղղակի դրկել մեզ անդլիերէն լեզուով և մանրամասնօրէն, առաջարկուած դործին վերաբերեալ պայմաններն և դաշինքներ կայացնելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
*Le Gérant* : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 56.